ՊԱՏՄԱԲԱՆԱԿԱՆԻՐԱԿԱՆ

ՄԱՐԻԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՋՈՒՂԱՅԻ ՊԱՀՊԱՆՎԱԾ ԽԱՉՔԱՐԵՐԸ

Ջուղայի խաչքարերը հայ խաչքարային մշակույթի ինքնատիպ դրսեւորումներից են: Յուրօրինակ ծավալատարածական ու հորինվածքային լուծումներով, տեխնիկական մշակման բարձր վարպետությամբ, աննախադեպ քանակով դրանք մշակութային մի յուրօրինակ վերելքի դասական օրինակ են ներկայացնում: Սակայն ադրբեջանական իշխանությունների կողմից 1998-2006 թթ. Ջուղայի խաչքարային դաշտի վերացումը նոր խնդիրներ է առաջադրում խաչքարային այս դպրոցի հետազոտության եւ մշակութային ժառանգության պահպանությանն ուղղված քաղաքականության առջեւ: Ինչպե՞ս հետազոտել կորսված ժառանգությունը, եւ ի՞նչպես լրացնել խաչքարագիտության մեջ համապատասխան բացը:

Այս հայեցակետից առանձնահատուկ կարեւորություն է ստանում Ջուղայի պահպանված եզակի խաչքարերի հետազոտությունը: Տվյալ պարագային արդիականություն է ձեռք բերում նաեւ դրանց ֆիզիկական անվտանգության ապահովմանն ուղղված խնդիրների բարձրաձայնումը եւ լուծումների առաջադրումը: Ներկա հետազոտության նպատակն է մանրամասն եւ բազմակողմանի քննության ենթարկել Ջուղայի պահպանված խաչքարերը: Նշյալ նպատակը ենթադրում է լուծել հետեւյալ կոնկրետ խնդիրները. ա) ներկայացնել Ջուղայի խաչքարերի գրահանման պատմությունը եւ դրանց ներկա տեղագրությունը, բ) ճարտարապետական, պատկերագրական եւ վիմագրագիտական քննության ենթարկել պահպանված օրինակները, գ) պարզել դրանց ինստիտուցիոնալ պատկանելությունը, ֆիզիկական վիճակը, հետագա պահպանմանն ուղղված միջոցառումները:

Ներկա հետազոտությունը Ջուղայի բոլոր պահպանված խաչքարերը համահավաք եւ բազմակողմանի ձեւով ներկայացնելու առաջին փորձն է: Այստեղ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ կդրվեն նաեւ չհրատարակված եւ մասամբ անհայտ մի քանի խաչքարերի նկարագրություններ եւ լուսանկար-

ներ: Հետազոտության հիմնական մեթոդներն են՝ մատենագիտական տեղեկությունների քննությունը, դաշտային հետազոտությունները, անհատների վկայությունները:

Պահպանված խաչքարերի ուսումնասիրությունը թույլ է տալիս ամփոփ պատկերացում կազմելու Ջուղայի խաչքարային մշակույթի առանձնահատկությունների մասին: Ինչպես նաև կարևորում և մանրամասնում է այդ հուշարձանների պահպանությանն ու անվտանգությանն առնչվող խնդիրները:

Ներկայումս ՀՀ տարածքում հաշվվում է Ջուղայից բերված 15 խաչքար: Դրանցից յոթը Էջմիածնում են՝ Մայր Տաճարի բակում և գտնվում են Հայ Առաքելական Եկեղեցու պահպանության տակ: Մեկ խաչքար պահվում է Հայաստանի Պատմության թանգարանում, որն ընդգրկված չէ մշտական ցուցադրությունում: Մեկ այլ խաչքար գտնվում է Երևանի կոնյակի գործարանի տարածքում: Այս հուշարձանի պահպանությունը վերահսկվում է Մշակույթի նախարարության կողմից: Մեկ խաչքար պահվում է Երևանի Հայկական այգեգործության և պտղաբուծության գիտահետազոտական ինստիտուտի կոլեկցիոն գինիների մառանում: Ինստիտուցիոնալ առումով այժմ գինիների մառանը, իր ողջ գույքով, այդ թվում նաև խաչքարը, պատկանում են Հայաստանի ազգային ագրարային համալսարանին: Մնացյալ հինգ խաչքարերը հաշվառված չեն պետության կողմից պահպանվող հուշարձանների ցուցակում[1]: Դրանցից երկուսը գտնվում են Երևանի Կենտրոնական գերեզմանոցում (Թոխմախ) և ծառայում են որպես գերեզմանաքար: Երկուսը տեղակայված են Մասիսի քաղաքային գերեզմանատանը: Մի խաչքար էլ գտնվում է Խարբերդի գերեզմանոցում: Պահպանված խաչքարերի մի խումբ էլ գտնվում է Հայաստանի սահմաններից դուրս: Ջուղայի մի խաչքար ցուցադրվում է ՌԴ Պետական Էրմիտաժում: Երկու խաչքարեր տեղադրված են Թավրիզի Ազգային Առաջնորդարանի առջև: Մի խաչքար էլ իր հանգրվանն է գտել Շվեյցարիայում, Ժենևի Ս. Հակոբ եկեղեցու հարևանությամբ: Ջուղայից տեղափոխված վեց խաչքար գտնվում են Վրաստանում: Այսպիսով, պահպանված խաչքարերը 25-ն են: Դրանցից յուրաքանչյուրի տեղափոխումն իր պատմությունն ու նպատակն ունի, որոնց կանդրադառնանք շարադրանքի ընթացքում:

Աշխատանքի մեջ վերոնշյալ խաչքարերի քննությունը իրականացվել է հետևյալ սխեմայով.

1. ներկա վայր,
2. տեղափոխման պատմություն,
3. տեխնիկական վիճակ,
4. ծավալային-ճարտարապետական լուծում,

1 ՀՀ պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակ, Երևան, 2007, http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=55737, 4.09.2014.

5. հորինվածք (քննությունն արված է ըստ հիմնական գոտիների՝ հետեւյալ հաջորդականությամբ՝ քիվ, խաչախորան եւ կենտրոնական խաչ, վարդյակ, պատկերաքանդակ, եզրագոտի),

6. արձանագրություն (տեղադրությունը, կատարման տեխնիկան եւ ոճը, բնագիրը),

7. մատենագիտություն,

8. լուսանկար:

Ճարտարապետական եւ հորինվածքային քննության առումով, խուսափելու համար կրկնություններից, դիմել ենք որոշակի ընդհանրացումների: Ուսումնասիրության այս փուլում ընդհանրացումներն արված են ամփոփ կերպով: Ջուղայի խաչքարերի առավել մանրամասն տիպաբանություն եւ դասակարգումներ կլինեն մեր հետագա հետազոտություններում՝ որպես հետազոտական հենք ընդգրկելով նաեւ խաչքարերի պահպանված լուսանկարներից ստացված տեղեկությունները:

Խաչքարերին տրված են պայմանական թվեր՝ նույն վայրի հուշարձանները տիպաբանելիս հեշտ զանազանելու համար:

Պետք է նշել, որ խաչքարերի մի մասը տեղափոխվել է ընտրողաբար՝ հիմք ընդունելով դրանց գեղարվեստական արժանիքները[2]: Մի քանիսի տեղափոխումը կապված է անհատական (ընտանեկան) պատմությունների հետ[3]:

Ելնելով ճարտարապետական եւ կատարման սկզբունքներից՝ պահպանված խաչքարերը կարելի է բաժանել երկու խմբի: Մի խմբում այն խաչքարերն են, որոնցում խաչասալի մակերեսի քանդակներն արված են ճարտարապետական խորությամբ եւ ծավալայնությամբ, տարբեր հարթությունների վրա[4]: Մյուս խմբին պատկանող խաչքարերը ճարտարապետորեն թույլ են արտահայտված, կատարմամբ հարթային են[5]: Խաչասալի ծավալի առումով տարբերակվում են ուղղանկյուն[6] եւ դեպի ներքեւ փոքր-ինչ նեղացող օրինակներ[7]:

Ջուղայի խաչքարերն իրենց հորինվածքային բաղադրիչներով ունեն հստակ առանձնացող չորս գոտիներ՝ քիվ, խորան, վարդյակ, պատկերաքանդակ եւ (կամ) արձանագրություն: Երբեմն բացակայում է ստորին գոտին:

Այս խաչքարերի համար բնութագրական են հետեւյալ մանրամասները. քիվերն աչքի են ընկնում հորինվածքների բազմազանությամբ. կան մի քանի սիր-

2 Էջմիածնի, Թբիլիսիի եւ այլ խաչքարեր:

3 Մասիսի եւ Կենտրոնական (Թռխմախի) գերեզմանոցի խաչքարերը:

4 Այս տիպին են պատկանում Էջմիածնի 8, 9, 11, 12, 13 խաչքարերը, Կոնյակի գործարանի, գինիների մառանի, ՀՊԹ-ի, Թռխմախի խաչքարերը, Թբիլիսիի 17, 19, 20, 21 խաչքարերը:

5 Այս տիպին են պատկանում Մասիսի, Խարբերդի, Էրմիտաժի, Ժենեւի խաչքարերը, Էջմիածնի 10 եւ 14, Թբիլիսիի 18 եւ 22 խաչքարերը:

6 Այս խմբի մեջ են մտնում Թբիլիսիի, ՀՊԹ-ի, Էրմիտաժի, Թռխմախի, Թավրիզի, Էջմիածնի 8, 9, 11, 12, 14 եւ Մասիսի 6 խաչքարերը:

7 Այս խմբին են պատկանում Կոնյակի գործարանի, Էջմիածնի 10 եւ 13, Մասիսի 7, Խարբերդի, Ժենեւի խաչքարերը:

ված հորինվածքներ, որոնք շատ հաճախ են կրկնվում. դրանցից են՝ Քրիստոս Ամենակալի պատկերաքանդակը[8], Քրիստոս քառակերպ գահին բազմած[9], Տիրամայրը Մանկան հետ[10], Քրիստոս սրբերի եւ հրեշտակների ուղեկցությամբ, մարդագլուխ երկմարմին ֆիգուրը՝ հրեշտակների կամ խաչերի ուղեկցությամբ[11], ութաթեւ աստղազարդեր[12], քառապսիդ հորինվածքներ եւ այլն:

Խորանները հիմնականում առնված են եռակամարների (սրանք առավել բնորոշ են վաղ փուլի խաչքարերին) կամ սլաքաձեւ կամարների տակ, վերջիններս հատկապես մեծ տարածում են գտնում 1570-ական թթ. հետո: Խորանակամարներում երբեմն նկատվում է մանրամասն՝ կամարի եզրերը երկու կողմերից ասես պահված լինեն բլթակաձեւ կապիչներով, ինչը հիշեցնում է եկեղեցական խորանների վարագույրները պահող պարան-կապիչները[13]: Այս կերպ առավել շեշտվում է խաչքարի եւ եկեղեցական խորանի միջեւ զաղափարական նույնականությունը: Խորաններն ըստ կառուցվածքի լինում են միախորան, կամ բազմախորան, երբ խորանային հարթությունը բաժանված է երկու, չորս, վեց եւ ավելի բաժինների (սեգմենտների), որոնցում նույնությամբ կրկնվում են խաչային հորինվածքները: Խաչերն ըստ խորանի կառուցվածքի եւս երկու հիմնաձեւերով են հանդես գալիս, եռակամարի տակ առնված խաչերն ավելի հարթային են, թեեւ առավել լայն ու մեծ ծավալ են զբաղեցնում: Սլաքաձեւ կամարների տակ առնված խորանախաչերը ունեն ձգված համամասնություններ, առավել բարձրաքանդակային են եւ հիշեցնում են ոսկերչական խաչեր: Վերջիններիս մոտ նկատվում է մի առանձնահատկություն. խաչաթեւերին երբեմն առկա են ուղղանկյուն ակոսներ, հավանաբար՝ արված ներդիրների (գունավոր ակնեղեն) համար: Հաճախ հանդիպում են նաեւ շուշանածաղիկներով ավարտվող խաչեր[14]:

---

8 Նման պատկերաքանդակ է կրում Էջմիածնի 10 խաչքարը:

9 Այս պատկերագրությունն ունեն Էջմիածնի 11 եւ 12 խաչքարերի թիվերը:

10 Այս թեման ներկայացված է Թբիլիսիի 21 խաչքարի քիվին, ընդ որում Տիրամոր եւ մանկան ֆիգուրներն այստեղ ուղեկցվում են Մոգերի երկրպագության, Ավետման եւ Քրիստոսը տաճարում թեմատիկ քանդակներով՝ ուղեկցված բացատրող գրություններով:

11 Այս կերպարի վերլուծությունը տե՛ս **Ն. Պետրոսյան**, Ջուղայի խաչքարերի պատկերագրությունը, «ՊԲՀ», 2004, թիվ 1, էջ 68-73: **J. Baltrušaitis, D. Kouymjian**, Julfa on the Arax and Its Funerary Monuments, "Armenian Studies", Galouste Gulbenkian Foundation, 1986, p. 39-42. Դահիպանված օրինակներից այս ֆիգուրն առկա է Էջմիածնի 13, Թոխմախի 3, Թբիլիսիի 17 եւ 20 խաչքարերում:

12 Ա. Յակոբսոնն այս մոտիվները համարում է ճարտարապետությունից վերցված: Դրանք ի սկզբանե արվել են խճանկարային ոճով, բազմագույն գտֆից, ինչպես, օրինակ, Անիի պալատի շքամուտքին (ԺԳ դ.): Սակայն արդեն այդ ժամանակից սկսած այն փոխարինում են դրանց նմանակումով: Բազմագունության արդիւնքը (էֆեկտը) զիջում է լուսաստվերային է արդիւնքին (**А. Л. Якобсон**, Об армянских хачкарах. Историко-художественные заметки, «ՊԲՀ», 1978, h՝ 1, էջ 220, 222):

13 Նման մանրամասներ (դեղատներ) առկա են Խարբերդի, Թավրիզի խաչքարերում: Այս մանրամասնը հանդիպում է միայն եռապված կամարի տեսք ունեցող խորանային հորինվածքների դեպքում:

14 Խաչի այսպիսի պատկերումը ադրբեջանցի հետազոտողների կողմից անվանվում է «աղվանական խաչ» եւ դրանով իսկ կասկածի տակ է առնվում նման խաչաձեւերով հուշարձանների հայկական ծագումը: Ռ. Գալչյանն իր «Հորինված պատմություն» գրքում հայկական հուշարձաններում նման խաչերի պատկերման մի շարք օրինակներ եւ համոզիչ փաստարկներ է ներկայացնում հոգուր դրանց ոչ աղվանական ծագման (**R. Galichian**, The Invention of history, Azerbaijan, Armenia and the showcasing of imagination, Second, revised and

խաչքարերի մի զգալի մասի վրա էլ Քրիստոսի եւ ավետարանիչների խորհրդապատկերներն են՝ արված խաչահատումում եւ խաչաթեւերի միջեւ ընկած անկյուններում[15]: Մի մանրամասն եւս, որ առավել հաճախ է հանդիպում Ջուղայի օրինակներում. խորանախաչը հաճախ կանգնած է փոքր կիսագնդի վրա, որը երբեմն փոխարինվում է Ադամի գլխի խորհրդապատկերով: Վերջինս հենված է Գողգոթայի խորհրդապատկեր ատրճանաձեւ պատվանդանի վրա: Ջուղայում, առավել քան այլ տարածաշրջանի խաչքարերում, հանդիպում են խաչակիր ձեռքերը[16]: Արեւի եւ լուսնի խորհրդապատկերները արվում են հիմնականում գրեթե երկու երրորդով սալից դուրս եկող կիսագունդ մակերեւույթով: Երբեմն դրանք փոխարինվում են ականթազարդերով:

Վարդյակները բաժանվում են երկու հիմնական տիպերի՝ հարթային, խաչասալի մակերեւույթից քիչ արտահայտված եւ սալի մեջ խորասուզված, սկուտեղանման՝ կենտրոնում կիսագնդաձեւ փքված, եզրերը դեպի դուրս թեքվող:

Ջուղայի խաչքարերի ամենաբնութագրական տարրերից մեկն էլ հանգուցյալի պատկերաքանդակն է՝ մի ձեռքին խաչ բռնած հեծյալի տեսքով[17]: Բացի այս տիպը՝ հանդիպում են նաեւ փոքրաձավալ, ճակատային (ֆրոնտալ) դիրքով կանգնած ֆիգուրներ[18], խաչ բռնած կամ ձեռքերը կրծքին ծալած, նաեւ դեպի կենտրոնական խաչը դարձած ծնրադիր ֆիգուրներ: Վերջիններս, որպես կանոն, ունեն հոգեւորականներին բնորոշ հանդերձանք[19]:

Արձանագրության առումով խաչքարերի բնագրերը մեծ մասամբ կրկնվում են. «Սուրբ[20] խաչս բարեխաւս առ Քրիստոս... հոգուն» կամ «Սուրբ խաչս յիշատակ է...»: Դրանք հիմնականում տեղակայված են ստորին՝ արձանագրային գոտում, հանգուցյալի պատկերաքանդակի ձախ կողմում: Սակայն հաճախ վիմագիրը կարող է կրկնվել վարդյակի եզրագոտու կամ խորանի ու քիվի միջեւ ընկած

expended edition, London/Yerevan, 2010, pp. 62-65):

15 Նման հորինվածքային լուծում ունի Թ-ավրիզի 15 խաչքարը:

16 Այս մոտիվի իմաստաբանական մեկնության համար տե՛ս **Ն. Պետրոսյան**, «Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը», Երեւան, 2007, էջ 291-294:

17 Ջուղային վերաբերող ուսումնասիրությունների մեծ մասում այս կերպարը ներկայացվում է որպես սբ. Գեորգ: Սակայն կերպարը պատկերագրորեն չի համապատասխանում վերջինիս ընդունված պատկերման ձեւին (սբ. Գեորգի պատկերագրության համար տե՛ս http://iconreader.wordpress.com/2012/04/25/saint-george-and-the-dragon-in-iconography/, 3.27.14), չկա որեւէ վկայություն, որում մատնանշվի Ջուղայում սբ. Գեորգի պաշտամունքի նման մասսայականությունը, բացի այդ՝ կերպարները բավական իրապաշտական կատարում ունեն, ժամանակի մշակույթին բնորոշ հանդերձանքով: Հեծյալների կերպարով հանգուցյալների պատկերման օգտին է խոսում նաեւ Ա. Վրույրի այն դիտարկումը, որ մանկահասակ հանգուցյալների ձեռքում դրվում էին մոմից պատրաստված խաչեր, որոնք նույնությամբ պատկերվում են բոլոր հեծյալների ձեռքին (**Ա. Վրույր,** Արամ Վրույրի «Ջուղա» հնագիտական անտիպ ակնարկը, «ՊԲՀ», 1967, հ՝ 4, էջ 177, տողատակ 9; **Ն. Պետրոսյան**, Ջուղայի խաչքարերի պատկերագրությունը, «ՊԲՀ», 2004, հ՝ 1, էջ 73-74):

18 Նման պատկերաքանդակ առկա է գիհիների մառանի խաչքարի վրա:

19 Նմանատիպ ֆիգուրի հանդիպում ենք Գոչավանքի՝ 13-րդ կեսերին պատկանող մի խաչքարի վրա, բայց տեղակայված քիվին եւ «Վրթ[անէս] եպ[իս[կոպոս]» մակագրությամբ: Դահպանված օրինակներում նմանատիպ ֆիգուրների հանդիպում ենք Ժեւեի եւ Թ-ավրիզի երկու խաչքարերի վրա:

20 Այստեղ եւ ստորեւ «սուրբ» ձեռով բացում ենք պատվո նշանների տակ առկա հապավումները, իսկ քառակուսի փակագծերի մեջ՝ առանց պատվո նշանի համառոտված կամ փորագրողի վրիպած տառերը:

գոտու վրա: Թվագրությունը հիմնականում տեղակայված է վարդյակակիր քառանկյան չորս անկյուններում: Երբեմն խորանախաչի հիմքում՝ խաչաթեւերի միջեւ, կարելի է հանդիպել վարպետի ինքնագրին՝ «կազմող» կամ «վարպետ» մակագրություններով:

Կարելի է առանձնացնել երկրաչափական, բուսական եւ բուսաերկրաչափական զարդամոտիվներով եզրագոտիներ: Դրանցում ամենից հաճախ կրկնվող բաղադրիչներն են ութաթեւ աստղազարդերը[21], եռակամարները՝ համակցված ականթազարդերով, զուգահեռ հյուսազարդերը: Եզրագոտիներում հաճախ նշմարելի են նռան եւ բողբոջների զարդամոտիվներ:

Պահպանված խաչքարերը ինստիտուցիոնալ պատկանելիության առումով ներառված են հետեւյալ խմբերում. խաչքարեր, որոնք գտնվում են պետության պահպանության տակ[22], եկեղեցապատկան խաչքարեր[23], անհատների վերահսկողության տակ գտնվող խաչքարեր[24], եւ հուշարձաններ, որոնք գտնվում են օտարերկրյա համապատասխան կառույցների իրավասության տակ[25]:

Ստորեւ առանձին-առանձին ներկայացվում են պահպանված հուշարձանները.

Խաչքար 1. Երեւանի կոնյակի գործարան. Ջուղայի պահպանված խաչքարերի թվում այս հուշարձանն իր հարուստ գեղարվեստական հարդարանքով հատուկ տեղ է զբաղեցնում:

Խաչքարի՝ Ջուղայից Երեւանի կոնյակի գործարան տեղափոխման մասին ուշագրավ վկայություն է տալիս Միքայել Խանոյանի[26] դուստր Անուշ Խանոյանը. «Հայրս շատ էր սիրում ճանապարհորդել Հայաստանով: Եթե տեսնում էր աչքաթող արված պատմության մի բեկոր, գործարանի մի գողտրիկ անկյունում հատուկ տեղ էր հատկացնում դրան: Իր ընկեր Ֆադեյ Սարգսյանի հետ Նախիջեւանից երկու խաչքար բերեցին. մեկը տեղադրվեց գործարանի, մյուսը Մերգելյանի ինստիտուտի բակում»[27]: Հուշարձանը ներառված է ՀՀ Երեւան քաղաքի պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում: ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի՝ հուշարձանների պահպանության գործակալության Երեւանի տարածքային բաժնի մասնագետների կողմից ամենամյա ստուգայցերի միջոցով վերահսկվում է խաչքարի պահպանվածությունը:

Բավականին լավ է պահպանված, միայն ստորին մասում հողմնահարված

21 **А. Л. Якобсон**, Об Армянских хачкарах, Историко-художественные заметки, «ՊԲՀ», հ^{մ} 1, էջ 220, 222:

22 Հայաստանի պատմության թանգարանի, Կոնյակի գործարանի խաչքարեր:

23 Էջմիածնի, Թավրիզի, Ժնեւի խաչքարեր:

24 Մասիսի, Խարբերդի, Թոխմախի գերեզմանոցներում գտնվող խաչքարեր:

25 Սանկտ-Պետերբուրգի Պետական Էրմիտաժում եւ Վրաստանում գտնվող խաչքարեր:

26 Միքայել Խանոյանը 1972-1984 թթ. զբաղեցրել է Երեւանի Կոնյակի գործարանի տնօրենի պաշտոնը:

27 Երեւանի Կոնյակի գործարան՝կենդանի պատմություն - http://www.mediamax.am/am/news/yerevan-XX-century/6470/ 10.23.2013:

է: Խաչասալի միջին բարձրության վրա նկատելի է ճաք, որը տարածվում է սալի գրեթե ամբողջ լայնությամբ: Այն կանգնեցված է նոր պատրաստված խորանարդաձեւ պատվանդանի վրա:

Խաչքարի հորինվածքային առանձնահատկություններից մեկն այն է, որ հանգուցյալի տիպական պատկերաքանդակն արված է հեծյալին ոչ բնորոշ դիրքով: Ձին պատկերված է շարժման մեջ, մարդկային ֆիգուրը հեծյալի համար բավականին անսովոր ճակատային դիրքով է, ոտքերը մի կողմում են՝ իրար խաչված: Աջ ձեռքում պահում է խաչը, ձախում՝ սանձը: Հանգուցյալի այս կերպ պատկերումն ասես միտված է շեշտելու դեպի հավիտենությունն ուղղված միստիկ ընթացքը:

Խաչքարի արձանագրությունը պատկերաքանդակի ձախ կողմում է՝ արված վեց տողով. «Սուրբ խաչս յիշատակ է պարոն Փիրբաշխին: Թվ[ին] ՌԻԸ [1579 թ.]»:

Խաչքարի վերաբերյալ տպագիր տեղեկություններ առկա են Ա. Այվազյանի երկու աշխատություններում[28]: Ընդ որում, դրանցից առաջինում արձանագրության մեջ հանգուցյալի անունը ընթերցվում է «Փիրիթաշխ», իսկ երկրորդում «Փիրբաշխ», պատկերաքանդակը ներկայացվում է որպես Ս. Գեւորգի[29]:

Խաչքար 2. Գտնվում է Երեւանի Հայկական այգեգործության եւ պտղաբուծության գիտահետազոտական ինստիտուտի կոլեկցիոն գինիների մառանում: Ջուղայից խաչքար տեղափոխելու գաղափարը եղել է Լ. Ջանփոլադյանինը[30]: Տեղափոխմանը մասնակցել են հայ, ուկրաինացի ու ադրբեջանցի երեք գինեգործներ եւ մի ռուս սահմանապահ: Գաղափարի՝ գինեգործների միջավայրում ծնունդն էլ թելադրել է, որ այն տեղադրվի մառանում:

Այս հուշարձանը, թեեւ տեխնիկական առումով նկատելի մեծ վնասվածքներ չունի, սակայն տեղադրված լինելով ստորգետնյա մառանում (որը չի շահագործվում)՝ մշտապես ենթարկվում է խոնավության քայքայիչ ազդեցությանը, որի հետեւանքով այն ամբողջությամբ պատված է հանքային նստվածքով:

Խաչասալի վրա արձանագրությունները տեղակայված են երեք գոտիներում: Խորանախաչի ներքեւում, աստիճանաձեւ պատվանդանի եւ սկուտեղանման հարթության երկու կողմերում վարպետի ինքնագիրն է. «Կազմող ՀՅ/Ղ [Հայրապետ՞ր] յիշեցէք»: Վարդյակի եզրագոտու հիշատակագիրն ասում է. «Սուրբ խաչս բարէխաւս առ Քրիստոս Սուքիասին, թվ[ին] ՌԼԵ [1586 թ.]»: Դիմերեսով կանգնած, ձեռքին խաչ բռնած մարդկային ֆիգուրի կողքին շղագրով գետեղված է. «Այս է հանգիստ Սուքիասին»:

Այս խաչքարի մասին որոշ տեղեկություններ առկա են Ա. Այվազյանի եւ Ս. Տեր-Ներսիսյանի աշխատություններում[31]:

---

28 **Ա. Այվազյան**, Ջուղա, Երեւան, 1984, էջ 114; նույնի՝ Նախիջեւանի վիմագրական ժառանգությունը, Ջուղա, հտ. Ա., Երեւան, 2004, էջ 166:

29 Նույն տեղում:

30 Լ. Ջանփոլադյանը գինեգործ-տեխնոլոգ, ակադեմիկոս էր (1912-1997 թթ.):

31 **Ա. Այվազյան,** նշվ. աշխ., էջ 165; **С. Тер-Аветисян**, Город Джуга, Тифлис, 1937, с. 162.

Խաչքար 3 եւ 4. Երեւանի Կենտրոնական կամ Թոխմախի գերեզմանոցում են գտնվում Ջուղայից բերված երկու խաչքար, որոնք ծառայում են իբրեւ գերեզմանաքարեր: Թոռնուհու վկայությամբ՝ հանգուցյալը՝ Երանոս Հակոբի Հովսեփյանը, լինելով արմատներով ջուղայեցի, մահից առաջ ցանկություն է հայտնել, որ իր համար բերվեն Ջուղայի Ամենափրկիչ վանքի տվյալ խաչքարերը՝ որպես գերեզմանաքարեր: Որդիներն էլ, իրենց վտանգի ենթարկելով, կատարել են հոր կամքը՝ աղբի մեքենայի մեջ թաքցնելով եւ դուրս բերելով դրանք բռնագրավված տարածքից: Այս ճանապարհով խաչքարերը հայտնվել են Թոխմախի գերեզմանոցում:

Խաչքարերն ունեն Ջուղայի դպրոցի համար տիպական համաչափություններ[32]: Քարասալերն ուղղանկյուն են: Խաչքարերից մեկը կանգնեցված է ուղղաձիգ դիրքով անմիջապես հողի մեջ, մյուսը ծառայում է որպես տապանաքար: Ընդ որում՝ կանգնեցված խաչքարի ստորին հատվածին փոքր-ինչ խորություն է տրված՝ պառկեցրած խաչքարը դրանում հարմարեցնելու համար:

Երկու կոթողներն էլ ունեն դեկորատիվ հարուստ հարդարանք, բազմաշերտ զարդաքանդակային մշակում:

Ուշագրավ է կանգնեցված խաչքարի քիվի վերին հատվածում արված նոր արձանագրությունը. «Իր ուզած քարը»: Քիվի երկու եզրերը քայքայված են: Հարուստ դեկորատիվ հարդարանքով աչքի է ընկնում եզրագոտին: Այն կազմված է ութանկյուն ատղազարդերի հաջորդական շարվածքով՝ յուրաքանչյուրի կենտրոնում տարբեր հորինվածքներով: Աջ եզրի ներքեւից չորրորդ ատղազարդի կենտրոնում հստակ տեսանելի է թռչնազարդ Ա. տառը: Խաչքարը բոլոր կողմերից սրբատաշ է, ինչը բնորոշ չէ Ջուղայի խաչքարերին եւ թույլ է տալիս ենթադրել, որ տեղափոխումից հետո ենթարկվել է մշակման: Այն մի քանի փոքր վնասվածքներ ունի եզրագոտու աջակողմյան եւ ձախակողմյան վերին հատվածում, քիվի աջ անկյունում, խորանի ձախ անկյունում, քայքայված է վարդյակի ստորին հատվածը:

Խորանից ներքեւ վարդյակն է՝ չորս անկյուններում թվագրությամբ. «Թվ[ին] ՌԽԷ [1598 թ.]»: Վարդյակի երիզի վրա առկա է արձանագրություն, որը դժվարացել ենք ընթերցել:

Խաչքար 4. Տապանաքար ծառայող խաչքարի ողջ ծավալը մտցված է հողի մեջ: Այդ պատճառով այն մշտապես ենթարկվում է խոնավության քայքայիչ ազդեցությանը: Այն պատված է խորադիր քանդակազարդերով, ինչը եւս տվյալ պարագայում ծառայում է ի վնաս խաչքարի. տեղումների հետեւանքով դրանցում մշտապես ջուր է կուտակվում, ինչի հետեւանքով մակերեսը պատվել է քարաքոսերով: Զարդաքանդակների ելնդավոր հատվածներն ատրիճանաբար քայքայվում են եւ պոկվում:

32 Ջուղայի խաչքարերի ճնշող մեծամասնությունն ունեն մոտ 2-3 մետր բարձրություն, 1 մետր լայնություն, 30-35 սմ հաստություն:

Վարդյակից ներքեւ նոր արձանագրություն է. «Ջուղայեցի Երանոս Հակոբի Հովսեփյան (15.03.1888-19.06.1960). հիշատակ իր որդիներից»: Քանի որ արձանագրությունն արված է ավելի խորը հարթության վրա քան վերին հարթաքանդակներն են, ինչպես նաեւ եզրագոտին տարածվում է նոր արձանագրության երկու կողմերում, ենթադրում ենք, որ այն արված է հին արձանագրության մաքրումով:

Այս եւ նախորդ խաչքարը հրապարակվում են առաջին անգամ:

Խաչքար 5. Գտնվում է Խարբերդի գերեզմանոցում: Այս խաչքարի տեղափոխման պատմության բացահայտումն օգնեց գտնել նաեւ Մասիսի գերեզմանատանը պահվող խաչքարերի՝ այդտեղ հայտնվելու պատմությունը: Պարզվեց, որ նշյալ երեք խաչքարերը Հայաստան են բերվել 1980-ական թթ. նախիջեւանցի մի ընտանիքի կողմից՝ մահացած հարազատի գերեզմանին դնելու նպատակով: Սակայն պետության կողմից դրանք առգրավվել են: Կոմունալ բաժնի պետին հրահանգվել է դրանք որեւէ տեղ կանգնեցնել: Այդ ժամանակահատվածում Մասիսի գերեզմանատան տվյալ հատվածը պուրակ է եղել, որտեղ էլ կանգնեցվել են խաչքարերը: Սակայն 1992 թ. ողբերգական դեպք է պատահել կոմունալ բաժնի պետի որդու հետ, որից հետո խաչքարերից մեկը նա տեղափոխել է Խարբերդի գերեզմանոց՝ տեղադրելով իր որդու գերեզմանի հարեւանությամբ: Մասիսի խաչքարերից մեկն էլ, որը վերցված է ցանկապատի մեջ, գտնվում է նույն ողբերգության զոհ դարձած երիտասարդի ընկերոջ գերեզմանի կողքին եւ վերահսկվում է նրա ծնողների կողմից[33]:

Խաչքարի վիճակը կարելի է գնահատել շատ ծանր: Քայքայված է խաչահիմքից ներքեւ ընկած ամբողջ հատվածը, ձախ եզրագոտու մեծ մասը: Վնասվածքներ ունեն աջ եւ ստորին խաչաթեւերի միջեւ ընկած հատվածը, քիվի աջ եզրը: Խաչքարը ներդրված է քարե սալահատակի մեջ: Կարելի է ենթադրել, որ նշյալ վնասվածքները հուշարձանը ստացել է տեղափոխումից հետո:

Հրապարակվում է առաջին անգամ:

Խաչքար 6 եւ 7. Մասիսի գերեզմանատան սկզբնամասում՝ մուտքից փոքր ինչ աջ, այլ գերեզմանաքարերի հարեւանությամբ տեղակայված են Ջուղայից բերված երկու խաչքար:

Առաջին խաչքարի հիմնային մասը, վարդյակի ստորին հատվածի հետ միասին վնասված են: Այն պահին, երբ արվել է լուսանկարը, խաչքարի շրջակա տարածքի խոտածածկույթը ենթարկվել էր այրման: Ենթադրում ենք, որ ջերմության ազդեցությունն է պատճառը, որ հուշարձանն ամբողջովին պատված էր հանքային սպիտակ նստվածքով:

Վարդյակը զբաղեցնող քառանկյան 4 անկյուններում նշմարելի է խաչքարի թվագրությունը. «Թվ[ին] ՌԼԵ [1576 թ.] »:

33 Տեղեկությունները գրամագրել է Արա Եսայանը՝ 12.02.2014 թ.:

Այս եւ հաջորդ խաչքարի մասին տպագիր միակ հիշատակությունն առկա է Ա. Այվազյանի գրքում[34]:

Երկրորդ խաչքարն առավել փոքրածավալ է, դեպի հիմքը փոքր ինչ նեղացող: Խաչասալի վերին աջ անկյունը թեթեւակի վնասված է: Ընդհանուր առմամբ խաչքարը լավ է պահպանված: Զարդաքանդակները թույլ են արտահայտված խաչասալի հարթության վրա: Խաչքարն, ի տարբերություն առաջինի, որը գտնվում է բաց տարածության վրա, առնված է գերեզմաններից մեկի տարածքի մեջ:

Չնայած իր փոքր չափերին՝ դեկորատիվ հարդարանքի շնորհիվ հուշարձանը մոնումենտալ տպավորություն է թողնում:

Ստորին մասում եռատող արձանագրությունն է. «Խ^աչս յ^իշ^{ատակ} է Խուբխաթունին, թվ[ին] ՌԳ [1554 թ.]»: Այս խաչքարը Ջուղայից պահպանված ամենահին օրինակն է:

Խաչքար 8. Այս եւ հաջորդ երեք խաչքարերը տեղակայված են Մայր Աթոռի արեւելյան կողմում՝ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի եւ Գրիգոր Լուսավորչի դարպասի հարեւանությամբ՝ քանդակազարդ երեսով դեպի հյուսիս: Արձանագրային գոտու ստորին հատվածը վնասված է: Վնասվածք ունի նաեւ խորանախաչի հիմքի կենտրոնական հատվածը: Հորինվածքային գոտիներից ներքեւ պահպանված է խաչքարի հիմնային հատվածը, որը սկզբնապես եղել է հողի մեջ: Այն գրեթե նույն չափն ունի, ինչ արձանագրային հատվածը: Խաչքարը կանգնեցված է նոր խորանարդաձեւ պատվանդանի վրա:

Արձանագրություններն արված են հորինվածքի տարբեր հատվածներում՝ մի մասը՝ քիվի վրա, մի մասը՝ խաչահիմքի երկու կողմերում, մնացյալ մասն էլ՝ արձանագրային հատվածում: Ընդ որում՝ արձանագրային հատվածի վեց տողանոց արձանագրության երեք տողերն արված են երկաթագրով, երեքը՝ շղագրով: Քիվի արձանագրությունը շատ վատ է պահպանվել, այդ պատճառով այն տարընթերցումների տեղի է տվել: Ա. Այվազյանն այն կարդում է. «սիփիքս իորդունա»[35], Ս. Սաղումյանն ու Վ. Հարությունյանը նմանապես կարդում են «սիփիքս իորդունա» եւ մեկնաբանելով որպես «սֆինքս» եւ «ֆորտունա»՝ տալիս են արձանագրությանը խաչաքարերի արձանագրային բովանդակությանը խորթ փիլիսոփայական մեկնություն[36]: Հ. Պետրոսյանն այստեղ առկա «յիսիքսիորդունա» տառաշարը կարդում է որպես «Յիս[ուս]ի Ք[րիստոս]ի որդուն Ա[ստուծոյ] եւ այն համարում խաչքարի ընդարձակ արձանագրության վերջնամասը[37]: Խաչահիմքի երկու կողմերում վարպետի ինքնագիրն է. «Կազմ^ող Գրիգ^որ»: Ստորին հատվածում արձանագրված է. «Այս է նշան տէրունական եւ բարէխաւս է փրկութե^{ան}

34 **Ա.Այվազյան,** նշվ. աշխ., էջ 166:

35 Նույն տեղում, էջ 71, **Ա. Վրույր**, նշվ աշխ.:

36 **Ս. Սաղումյան, Վ. Հարությունյան,** Վիմագրեր Հին Ջուղայից, «ԼՀԳ», 1983, հ^մ 12, էջ 51:

37 **Հ. Պետրոսյան,** Ջուղայի խաչքարերի պատկերագրությունը, «ՊԲՀ», 2004, թ. 1, էջ 71:

մահդասի Փաշամին հ՝գ՝ն, թվ[ին] ՌԻԷ [1578 թ.]. եւ հարազատ եղբ՝ոցն տ՝ր Աթանասին, Բաբ[աջանին եւ ծ]ն՝ող՝ց առ Յիս՝ուսի Քրիստոսի որդուն Աստուծոյ»:

Այս խաչքարի մասին տպագրվել է մի քանի աղբյուրներում: Խաչքարը հանդիպում է անգամ Ա. Վրույրի հողվածում, Էջմիածին տեղափոխելուց շատ առաջ[38]:

Խաչքար 9. Տեղակայված է նախորդից փոքր-ինչ հեռու: Զգալիորեն վնասված է աջ եզրագոտու մեծ մասը: Պահպանված է խաչքարի հիմքը: Տեղադրված է նոր կառուցված խորանարդաձեւ պատվանդանի վրա:

Քիվի վրայի արձանագրությունը հետեւյալն է. «Ո՛վ ս՝որ նշան դու Աստուծոյ, Զխերխ՝ն լուսովդ պ՝այծ՝ռ՝ցոյ»: Ներքեւի արձանագրությունն ասում է. «Ս՝որ խաչս յիշ՝ատ՝ակ է Մանուկ Խէրխ՝ն», վարդյակի շուրջը՝ «Թվ[ին] ՌԾԱ [1602 թ.]»:

Խաչքար 10. Այն նախորդների համեմատ հարթաքանդակային է եւ փոքրածավալ: Հիմքի հատվածը հողմահարված է: Վնասված է նաեւ խորանախաչի ստորին թեւը: Խաչասալն ունի դեպի ներքեւ փոքր-ինչ նեղացող մակերես:

Խորանային սլաքակամարն ամբողջովին պատված է արձանագրային զոտիով. «Ս՝որ խաչս բարեխօս առ Քրիստոս Մանուկ Մարգարէ Սօլթանին Անեփիկին Բուռթէլին» (շարունակվում է վարդյակի անկյունում): Խաչաթեւերի երկու կողմերում թվագրություն է. «Թվ[ին] ՌԾԲ [1603 թ.]»:

Այս խաչքարի մասին տեղեկություններ առկա են երկու աղբյուրներում[39]:

Խաչքար 11. Վարդյակից ներքեւ ընկած, այդ թվում՝ արձանագրային հատվածն ամբողջովին հողմահարված է:

Արձանագրությունը գտնվում է քիվից ներքեւ առանձին զոտիով եւ խորանի հարթության վրա: Հավանաբար վարդյակից ներքեւ նույնպես եղել է արձանագրություն, որն, ավաղ, քայքայված է: Հիշատակարանում հստակ ընթեռնելի է. «Ս՝որ խաչս բարեխօս առ Քրիստոս ման՝ակ Զաքարին»: Խաչաթեւերի վերին հարթության վրա ժամանակագրությունն է. «Թվ[ին] ՌԾԱ [1602 թ.]», դրանից ներքեւ. «Ծն՝ողացն Ամիրին»:

Այս եւ հաջորդ չորս հուշարձանը հիշատակվում են Ա. Այվազյանի եւ Ս. Սաղումյանի աշխատություններում[40]:

Խաչքար 12. Տեղադրված է Մայր տաճարը շրջափակող պարսպի հյուսիսային խորշերից մեկում: Խաչասալի ստորին՝ հողի մեջ դրվող հատվածը բացակայում է, դրված է խորհանարդաձեւ նոր պատվանդանի վրա: Պատվանդանի եւ խաչքարի հատման գիծը ամրակայման արդյունքում որոշակի վնասվել է: Վնասված են նաեւ ստորին աջ ասպղազարդը, խորանախաչն ամփոփող ուղղանկյան ստորին եւ կողային եզրաշերտերը, խաչատակի կիսագնդի վերին հատվածը, Քրիստոսի դեմքը: Գրեթե ամբողջովին քայքայված են հիշատակագրերը:

38 **С. Тер-Аветисян**, նշվ. աշխ., էջ 152; **Ն. Պետրոսյան**, նշվ. աշխ., էջ 177:

39 **Ս. Սաղումյան, Վ. Հարությունյան,** նշվ. աշխ., էջ 53; **Ա. Այվազյան**, նշվ. աշխ., էջ 167-168:

40 Նույն տեղում:

Քիվափակի արձանագրությունից, որը թեեւ շատ վատ է պահպանվել, ընթեռնելի է. «Սուրբ խաչս բարէխաւս առ Քրիստոս պարոն Յովանիսին» հատվածը: Ասպիճանաձեւ պատվանդանի երկու կողմերում վարպետի ինքնագիրն է. «Գրիգոր վարպետ»[41]: Հիշատակարանը կրկնվում է պատկերաքանդակի կողքի արձանագրության մեջ. «Սուրբ խաչս բարեխօս առ Քրիստոս պարոն Յովաննէսին հոգուն[42]»:

Խաչքար 13. Գտնվում է հին վեհարանի հարեւանությամբ, որմնախորշերից մեկում: Խոնավության հետեւանքով խաչքարի հետնամասը քայքայվում է: Դիմերեսը եւս խոնավության հետեւանքով մեծապես տուժել է: Վնասված են քիվի վերին հատվածը եւ ձախ անկյունը, վարդյակի ստորին հատվածը եւ դրանից ներքեւ ողջ մակերեսը: Խաչասալը տեղ-տեղ պատված է հանքային նստվածքով: Խաչասալն ունի դեպի ներքեւ փոքր-ինչ նեղացող մակերես: Առկա են հորինվածքային երեք գոտիներ, թեեւ եզրագոտու վարդյակից ներքեւ շարունակվելը հուշում է, որ եղել է եւս մեկ գոտի, որն ամբողջությամբ քայքայված է[43]:

Արձանագրային գոտու պարունակությունը հետեւյալն է. «Սուրբ խաչս բարեխաւս առ Քրիստոս Յակոբին հոգուն, թվ[ին] ՌԾ [1601 թ.]», վարդյակի շուրջը. «Թվ[ին] Ռ...»:

Խաչքար 14. Գտնվում է նախորդի հարեւանությամբ: Խաչասալի վերին հատվածը, այդ թվում նաեւ քիվի վերին եզրագոտին մասնակի վնասված են: Ընդհանուր առմամբ խաչքարը լավ է պահպանված: Խաչասալի հարթաքանդակները ճարտարապետորեն թույլ են արտահայտված: Հորինվածքային առումով այն զուսպ հարդարանք ունի:

Խաչաթեւերի միջեւ ընկած հարթության վրա շղագիր արձանագրություն է. «Սուրբ խաչս յիշատակ է Ստէփաննոսին: Թվ[ին] ՌԾԱ [1602 թ.]»:

Խաչքարեր 15 եւ 16. Այս եւ հաջորդ խաչքարերը 1965 թ. Արաքսի ափին գտնվող Հովվի մատուռից տեղափոխվել են Թավրիզ եւ տեղադրվել Ղալայի Ս. Աստվածածին եկեղեցու բակում: 2012 թ. մայիսի Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա կաթողիկոսի՝ թեմ կատարած Հովվապետական այցի առիթով Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ Գրիգոր Ծ. Վարդապետ Չիֆթճեանի նախաձեռնությամբ փոխադրվել են Թավրիզի Ազգային Առաջնորդարանի բակ, տեղադրվել գլխավոր մուտքի երկու կողմերում: Վերջինիս վկայությամբ, երբ հողից դուրս են բերվել, յուրաքանչյուրի տակ խաչքարի բարձրությամբ անտաշ քար է եղել[44]:

Խաչքար 15. Այն որոշակի վնասվածքներ ունի ստորին հատվածում, վարդ-

41 Այս եւ Էջմիածնի թիւ 8 խաչքարի Գրիգոր վարպետը տարբեր են: Վերջինս միշտ իր անունը մակագրում է՝ «կազմող»: **С. Тер-Аветисян**, նշվ. աշխ., էջ 164:

42 Վերջին արձանագրությունը բերվում է ըստ Ա. Այվազյանի (նշվ. աշխ., էջ 168):

43 **Ս. Սաղումյան, Վ. Հարությունյան,** նշվ. աշխ., էջ 53:

44 Թավրիզի երկու խաչքարերի մասին տեղեկությունները սիրահոժար տրամադրել է Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ Գրիգոր Ծ. Վարդապետ Չիֆթճեանը:

Խաչքար 7,
Մասիսի
գերեզմանոց

Խաչքար 8,
Էջմիածին

Խաչքար 9,
Էջմիածին

Խաչքար 10, 11,
Էջմիածին

Խաչքար 12,
Էջմիածին

Խաչքար 13,
Էջմիածին

Հավելված 1

Խաչքար 1,
Երեւանի
կոնյակի
գործարան

Խաչքար 2,
Գինիների
մառան

Խաչքար 3,
Թոխմախի
գերեզմանոց

Խաչքար 4,
Թոխմախի
գերեզմանոց

Խաչքար 5,
Խարբերդի
գերեզմանոց

Խաչքար 6,
Մասիսի
գերեզմանոց

յակից դեպի ներքև՝ արձանագրային հատվածում առկա է ճաք: Արձանագրությունը գրեթե ամբողջովին հողմահարված է:

Քիվը զբաղեցնում են երկու քառաբսիդ հորինվածքներ: Նրանց ներքին մակերեսը լրացված է խաչաձև հյուսկեն զարդանախշերով: Երկու քառաբսիդների միջև տարածությունը հագեցած է զարդանախշերով: Քիվի հիմնական հորինվածքից վերև առկա է նեղ մեանդրատիպ զարդագոտի:

Խորանը զբաղեցնում է հարթ եւ լայն խաչը: Խաչահատումում, շրջանակի մեջ Քրիստոսի պատկերաքանդակն է: Խաչաթեւերի չորս անկյուններում ավետարանիչների խորհրդապատկերներն են: Խաչաթեւերը կազմված են ելնդավոր հյուսազարդից: Եռակամարների միջև ընկած հարթություններում ոճավորված բուսազարդեր են: Խաչահիմքի երկու կողմերից դուրս են գալիս մեկական հովհարաձեւ արմավազարդեր, յուրաքանչյուրի վրա՝ չորսական նռնամոտիվներ: Ձախ արմավազարդի եւ վարդյակի արանքում ծաղիկ է քանդակված, ճիշտ այնպիսին, ինչպիսին սովորաբար հանդիպում ենք խորանի կամարի երկու անկյուններում՝ որպես երկնային լուսատուների խորհրդանախշեր: Աջ արմավազարդի եւ վարդյակի միջև, ասես վարդյակին հենված, ուշագրավ մարդկային պատկերաքանդակ է՝ գլխին վեղար, ձեռքերը դեպի խաչը մեկնած, ծնրադիր դիրքում: Խաչն առնված է եռատված կամարի տակ, որի ծայրերին ասես պարանից լեզվակներ են (ինչպես եկեղեցու խորանի վարագույրը պահող կապիչները): Կամարի երկու անկյուններում արմավազարդային հորինվածքներ են: Խորանախաչն անմիջապես կանգնած է վարդյակի վրա: Վերջինս խորասուզված է խաչասալի հարթության մեջ եւ ունի դեպի դուրս թեքվող նախշազարդ եզրագոտի, ինչն էլ իր հերթին կազմված է զուգաթել հյուսազարդից:

Վարդյակի տակ նշմարվում է հիշատակարանը, որն, ավաղ, գրեթե ամբողջությամբ հողմահարված է: Նշմարելի է «ՍաՒբ խաչս ... հդս [մահդասի՞] ...» գրությունը: Խաչահիմքի եւ արմավազարդերի միջև թվագրությունն է. « Թվ[ին] ՌԺԳ [1564 թ.]»:

Խաչքար 16. Խաչքարի վրա առկա գնդակի հետքերը հուշում են, որ այն օգտագործվել է նշանառության համար: Այն մի շարք վնասվածքներ ունի: Հորինվածքային առումով այս հուշարձանը համեմատաբար զուսպ հարդարանք ունի: Խաչահիմքի ձախ կողմում, անմիջապես վարդյակին հենված ծնրադիր մարդկային պատկերաքանդակ է՝ ձեռքերը դեպի խաչը պարզած: Մորուքի, վեղարի եւ երկար հանդերձի առկայությունն, անկասկած, վկայում են, որ մեր առջև հոգեւորական է: Նրան հանդիպակաց բուսազարդ է, որի ծայրում նշմարվում է ինքնախոցոտվող թռչունի մոտիվը:

Վարդյակի ներքեւում հազիվ նշմարելի է հիշատակագիրը, որն ամբողջությամբ հողմահարված է: Կենտրոնական խաչի աջ եւ ձախ թեւերից վերև թվագրություն է. « Թվ[ին] ՌԺ...»:

Այս եւ նախորդ խաչքարերը հրատարակվում են առաջին անգամ:

Ուսումնասիրելով Ջուղայի խաչքարերին առնչվող աղբյուրները՝ հանդիպեցինք հղումների, որոնք ցուցում էին Ջուղայից Թիֆլիս փոխադրված մի խումբ խաչքարերի մասին: Դրանց քննությունից հնարավոր եղավ պարզել, որ 1874 թ. մոտ 10 խաչքարեր Գուստավ Ռադդեի[45] կողմից եւ նրա անմիջական ֆինանսական աջակցությամբ[46] տարվել են Թբիլիսիում գտնվող Կովկասյան թանգարան: 1902 թ. լույս տեսած «Կովկասյան թանգարանի հավաքածուները» գրքի Ե. հատորում տեղ են գտել հիշյալ խաչքարերի եւ խոյակերպ տապանաքարերի մասին նկարագրական տվյալներ[47]: Այստեղ պահպանվող հայկական հուշակոթողների մասին նոր հրապարակումների հանդիպում ենք արդեն բավականին ուշ: 1997 թ. «Հայոց Աշխարհ» օրաթերթում Սամվել Կարապետյանն անդրադարձել է երբեմնի Կովկասյան թանգարանում պահվող եւ 1980-ական թթ. Արմազի թանգարան տեղափոխված կոթողներին: Հիշյալ հուշարձանների մասին վերջին հրապարակումները եղել են 2004 թ.: Արգամ Այվազյանն իր «Նախիջեւանի վիմագրական ժառանգութիւնը» գրքում հիշատակում է Վրաստանի Արմազի թանգարանում պահվող 3 խաչքարերի մասին[48]: Նույն թվականին Սամվել Կարապետյանը «Կովկասյան թանգարանի հայկական հավաքածուն» գրքում ներկայացնում է Կովկասյան թանգարանից Արմազի եւ Վրաստանի արվեստի պետական թանգարան փոխադրված մի խումբ կոթողներ՝ համառոտ նկարագրությամբ եւ արձանագրություններով[49]: Թերեւս սա այն ամենն է, ինչ մինչ 2011 թ. հայտնի է եղել Ջուղայից Թբիլիսի տարված խաչքարերի եւ կոթողների մասին:

Այս հուշարձանների մասին վերջին հիշատակությունը եղել է այն, որ 2004-ին սրանք բոլորը տարվել են Արմազիի թանգարանից անհայտ ուղղությամբ[50]:

Պարզելու համար վերոնշյալ կոթողների ներկայիս վիճակը՝ 2012 թ. օգոստոսին ուղեւորվեցինք Վրաստան: Թբիլիսիից մոտ 20 կմ հեռավորության վրա գտնվող երբեմնի Արմազի թանգարանը ծայրահեղ անմխիթար վիճակում էր: Ասել, թե այստեղից իսպառ անհետացել էին բոլոր ցուցանմուշները, սխալ կլինի: Թանգարանի տարածքում ցաք ու ցրիվ ընկած էին հուշարձանների բեկորներ, կիսավեր շինության մեջ շարունակում էր կանգնած մնալ քառակող մի կոթող (կամ մույթ) պատված բուսական զարդաքանդակներով: Թանգարանի տարածքում էր նաեւ Ջրաշենի Ս. Ավետյաց եկեղեցու խոյակաձեւ մի բարձրաքանդակ[51]:

---

45 Գերմանացի բնագետ եւ աշխարհագետ, 1867 թ. Թիֆլիսում հիմնել է «Կովկասի բնապատմական թանգարանը»:

46 **Г. И. Радде,** Краткий очерк истории развития Кавказского музея в первые 25 лет существования с 1-го января 1867 по 1-ое января 1892 г., Тифлис, 1891, с. 22.

47 Коллекции Кавказского музея, обработанные совместно с учеными специалистами и изданные др. Г. И. Радде, Тифлис, 1902, том 5, с. 204-205.

48 **Ա. Այվազյան,** Նախիջեւանի վիմագրական ժառանգութիւնը, հտ. Ա., Ջուղա, Երեւան, 2004:

49 **Ս. Կարապետյան**, Կովկասյան թանգարանի հայկական հավաքածուն, Երեւան, 2004:

50 Նույն տեղում, էջ 37:

51 Այս խոյակի մասին հիշատակվում է նաեւ Ս. Կարապետյանի նշված աշխատության մեջ, էջ 64:

Առկա էին նաեւ արաբական գրություններով որոշ բեկորներ, թեւավոր խաչեր եւ այլն: Սակայն մեզ հետաքրքրող որեւէ հուշարձան այնտեղ չկար: Թանգարանի պահակի խոսքերով՝ դրանք տեղափոխվել էին Թբիլիսիի կենտրոնական թանգարաններից մեկը:

Հիմնվելով մեզ հասած վկայության վրա, ըստ որի՝ խոյակերպ տապանաքարեր են տեսել Թբիլիսիի ազգագրական թանգարանի տարածքում, այցելեցինք այնտեղ: Հարկ է նշել, որ կա՛մ չիմացության պատճառով եւ կա՛մ գաղտնի պահելու նպատակով թանգարանի աշխատակիցներից որեւէ մեկը չկարողացավ տեղեկություն տալ այդ տարածքում գտնվող նման հուշարձանների մասին՝ մատնանշելով միայն թանգարանի մուտքի մոտ ցուցադրված խոյակերպ մի կոթող: Այնուամենայնիվ, շարունակելով շրջել թանգարանի տարածքում, քայլերը մեզ առաջնորդեցին դեպի մի գողտրիկ հատված, որտեղ, շրջապատված բուսականությամբ, կղմինդրե թիթեղներով ծածկված ինչ-որ քարակույտ էր, որի միջից նշմարվում էին հարուստ զարդաքանդակներով պատված երկու խոյաձեւ տապանաքարեր: Մասամբ ազատելով ծածկը՝ մեզ հաջողվեց տեսնել իրար վրա կիտված մի խումբ խաչքարեր եւ կոթողներ: Ստորեւ ներկայացնում ենք այն կոթողների ցուցակը, որոնք հնարավոր եղավ տեսնել եւ լուսանկարել. Բացի արդեն հիշատակված՝ Ջուղայից բերված վեց խաչքարը եւ երկու խոյաձեւ տապանաքարը՝ այստեղ էին գտնվում նաեւ երկու քառակող խաչքարեր Սոդքից, մեկ խոշոր չափերի խաչքար, մեկ օրորոցաձեւ տապանաքար՝ զարդարված պատկերաքանդակներով, երեք խաչքարեր, որոնց հայտնաբերման նախնական վայրն անհայտ է: Սրանք բոլորն այն նմուշներն են, որ պահվել են Արմազիի թանգարանում[52]: Չի բացառվում, որ բացի նշվածներից այստեղ լինեն նաեւ այլ կոթողներ, կամ բեկորներ, որոնք հասկանալի պատճառներով հնարավոր չի եղել նկատել:

Ինչ վերաբերում է այս կոթողների ներկայիս վիճակին, ապա հարկ է նշել, որ համեմատելով նախկինում արված լուսանկարների հետ՝ դրանց վիճակն ավելի է վատացել: Ջուղայի խաչքարերը մեկ շարքով իրար վրա են դրված, ինչն անխոս իր բացասական հետեւանքները կթողնի ավազաքարից լինելու պատճառով, առանց այդ էլ՝ դյուրաբեկ կոթողների վրա: Օրորոցաձեւ տապանաքարը երկու մասի է կիսված: Չափազանց վնասված է Սոդքի քառակող կոթողներից մեկը, մինչդեռ նախորդ լուսանկարում երեւում է, որ վնասված է միայն խաչահատումից փոքր-ինչ ներքեւ ընկած հատվածը: Միանգամայն հասկանալի է, որ նման պայմաններում կոթողները ռիսկային վիճակում են, ճակատագիրն՝ անհայտ: Ուստի խելամիտ չէ քննարկել այն վարկածը, որ այս հանգրվանը վրաց կառավարության կողմից հուշարձաններին տրվել է ժամանակավոր՝ առավել պատշաճ վայր տեղափոխելու նկատառումով:

52 **Ս. Կարապետյան,** նշվ. աշխ., էջ 42-81:

Ուշագրավ է, որ Կովկասյան թանգարանի հայկական հավաքածուն Հայաստան փոխադրելու հարցը արծարծվել է դեռևս 1919 թ., երբ Վրաստանի կառավարությունը ազգայնացնում էր թանգարանը: Թանգարանի ավագ վերահսկիչ Սմբատ Տեր-Ավետիսյանի՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանին ուղղված զեկուցագրում առաջարկում է կամ պահպանել թանգարանի նախկին կարգավիճակը, կամ բաժանել բոլոր գույքը: «Վերջին դէպքում մեր կառավարութեան եւ Ձեր վրայ, իբրեւ այդ կառավարութեան ներկայացուցիչների, ընկնում է մի մեծ պարտականութիւն՝ միջոցներ ձեռք առնել օր առաջ ազատելու մեր ազգային գոյքը յափշտակելուց եւ փոխադրել մի աւելի ապահով տեղ՝ դուրս բերելով այն բոլորը, ինչ առնչութիւն ունի հայոց կեանքի հետ: Յեղաձգել կամ ձգձգել այս խնդիրը կը նշանակի միջոց տալ ուրիշներին վատնելու մեր ազգային սեպհականութիւնը, որի հետ մենք կապուած ենք դարերով, չէ՞ որ այդ իրերը մեր գոյութեան դոկումենտներն են»[53]:

Ստորև ներկայացնում ենք Ջուղայի հիշյալ կոթողների մասին տեղեկությունները՝ հիմնված լուսանկարներով արված քննության եւ առկա աղբյուրների տված կցկտուր տեղեկությունների վրա[54]:

Բոլոր խաչքարերի հիմնային հատվածները, որով դրվել են հողի մեջ՝ կորած են: Հարթեցված են նաեւ խաչքարերի հետին եւ կողային մակերեսները: Հատկանշական է, որ «Կովկասյան թանգարանի հավաքածուները» գրքում խոյակերպ կոթողները, չնայած իրենց ձեւին, ի թիվս խաչքարերի՝ անվանվել են «խաչեր»[55]: Սա է թերեւս պատճառը, որ խաչքարերի թիվն իրականում ավելի քիչ է, քան հիշատակվում է: Սակայն այս պարագայում եւս, նկատի առնելով «մոտ տասը խաչքար» տեղափոխված լինելու մասին վկայությունը, երկու կոթող շարունակում են մնալ չբացահայտված:

Խաչքար 17. Խաչասալն ուղղանկյուն է: Վարդյակից ներքեւ ընկած հատվածը բացակայում է: Զարդաքանդակներն արված են մի քանի հարթությունների վրա: Խորանը մասնատված է չորս հատվածների՝ յուրաքանչյուրում մեկական խաչ: Խորանային հորինվածքները ճշգրտորեն կրկնում են միմյանց: Խաչաթեւերը զուգաթել ելնդազարդերով են կազմված եւ ավարտվում են ոճավորված շուշանածաղիկներով: Յուրաքանչյուր խաչ կանգնած է տրամատավորվող եզրերով ասպիճանաձեւ պատվանդանի վրա հիմնվող կիսագնդի վրա: Խաչահիմքերի երկու կողմերում հովհարաձեւ զարդեր են: Խաչերն առնված են սլաքաձեւ կամարների տակ: Վերին եւ ստորին զույգ խորանները իրարից առանձնանում են հորիզոնական գծով: Զույգ կամարների միջեւ առկա են մեկական կիսագնդաձեւ

53 ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գ. 28, թ. 9-10

54 Այս հոդվածի շրջանակներում նպատակահարմար ենք համարում ներկայացնել Թբիլիսիի խաչքարերի ներկայիս վիճակն արտահայտող լուսանկարներ (հավելված 2): Խաչքարերի առանձին լուսնկարներին ծանոթանալու համար տե՛ս **Ս. Կարապետյան,** նշվ. աշխ., էջ 42-43, 48-51, 56-57:

55 Коллекции Кавказского музея, указ. соч., с. 204.

ելուստներ: Քիվի կենտրոնում երկմարմին միագլուխ ֆիգուր է, երկու կողմերում՝ պայտաձեւ խորանների տակ առնված մեկական խաչ: Քիվի վերնամասում նեղ զարդագոտի է: Վարդյակը առնված է քառանկյան մեջ, երիզը դեպի դուրս է թեքված: Եզրագոտին կազմված է արմավազարդերից, գոտեւորում է մինչեւ քիվը եւ խորանի վերին հատվածը:

Վարդյակի ձախ սյորին անկյունում արձանագրությունն է. «Թվ[ին] ՌԼ [1581 թ.]»:

Խաչքար 18. Խաչասալն ուղղանկյուն է: Խաչահիմքի բարձրության վրա կոտրված է երկու մասի: Խորանի կենտրոնում ծավալուն խաչն է՝ կազմված մանր հյուսված ելդազարդից: Խաչահատումը շեշտված է շրջանաձեւ նախշազարդով (օրնամենտով): Խաչի հիմքում՝ Ադամի գլուխն է՝ տրամատավորվող եզրերով աստիճանաձեւ պատվանդանի վրա: Խորանի ողջ ետնախորքը պատված է բուսական ոճավորված ասիմետրիկ հարդարանքով: Խաչն առնված է յուրատիպ սլաքաձեւ կամարի տակ, որի սյորին մասերը կիսաշրջանի տեսք ունեն: Խորանի անմիջապես վերեւում ուղղանկյուն զարդագոտի է: Քիվը կազմված է հորիզոնական դասավորված չորս կրկնակի շրջանագծերով, որոնք հատվում են զուգաթել թեք խաչերով: Քիվից վեր նեղ զարդագոտի է: Վարդյակը երիզված է դեպի դուրս թեքվող նեղ զարդագոտիով: Առնված է քառանկյան մեջ, որի անկյուններում թվագրություն է: Վարդյակի եւ արձանագրային հատվածի միջեւ մեանդրներով հարդարված նեղ զարդագոտի է: Դրանից ներքեւ եռատող արձանագրություն է: Եզրագոտին պատված է եռակամարների տակ առնված արմավազարդերի ռիթմիկ դասավորված շարքով:

Վարդյակի շուրջ չորս անկյուններում փորագրված է թվականը, իսկ դրանից ցած եռատող արձանագրությունն է. «Սաքր խաչս յիշատակ է Մէրիսսին հոգոյն, թվ[ին] ՌԽԹ [1600 թ.]»:

Խաչքար 19. Զարդաքանդակները որոշ հատվածներում հասնում են ճարտարապետական խորության: Խորանի կենտրոնը զբաղեցնում է երկատված թեւերով սլացիկ խաչը՝ երկու կողմերից ելնող արմավազարդերով: Խաչը հիմնված է աստիճանաձեւ պատվանդանի եւ սկուտեղանման հարթության վրա: Խաչաթեւերի միջեւ ընկած հարթությունը զբաղեցնում է արձանագրությունը: Խաչն առնված է մի քանի հարթությունների վրա քանդակված բազմաշերտ սլաքաձեւ կամարի տակ, որի երկու անկյուններում բուսական զարդամոտիվներ են: Ուշագրավ է քիվի հորինվածքը: Այն կազմված է չորս կրկնակի շրջանագծերից, որոնք հատվում են հավասարաթեւ թեք խաչերով: Քիվի վերին հատվածում նեղ զարդագոտի է: Վարդյակը Ջուղային բնորոշ տիպիկ օրինակ է: Չորս անկյուններում արձանագրված է թվականը: Եզրագոտին կազմված է ութանկյուն աստղազարդերի հաջորդական շարվածքով: Խաչաթեւերի եւ վարդյակի շուրջ

փորագրված է. «Սուրբ խաչս յիշատակ Դօիթին [=Դաւիթին[56]], Թվ[ին] ՌԽԹ [1600 թ.]»[57]:

Խաչքար 20. Խաչասալը ուղղանկյուն է: Հորինվածքը բաժանվում է չորս գոտիների՝ քիվ, խորան, վարդյակ, պատկերաքանդակ եւ արձանագրություն: Խորանը կազմված է երկու ուղղահայաց խաչերից: Վերջիններս իրենց համամասնություններով ավելի նմանվում են ոսկերչական խաչերի, քան քանդակային: Թեւերն ավարտվում են հյուսածո ոճավորված շուշանածաղիկներով: Խաչերը հիմնված են ատիճանաձեւ պատվանդանների եւ շրջանաձեւ մակերեւույթների վրա: Խաչահիմքերի երկու կողմերում դեպի վերեւ փոքրացող շրջանաձեւ գալարազարդերով կազմվող արմավազարդեր են: Խաչերն առնված են պայտաձեւության ձգտող խորանների տակ, որոնց միջեւ տեղակայված է, հավանաբար, որեւէ լուսատու ցուցող (ծննդյան ատող, արդարության արեգակ) կիսագունդ: Քիվի կենտրոնն զբաղեցնում է երկմարմին, միագլուխ ֆիգուր: Աջ եւ ձախ կողմերում նույնպիսի պայտաձեւ խորանների մեջ առնված մեկական խաչեր են, հիմքում՝ արմավազարդերով: Քիվի վերին հատվածում բարակ զարդագոտի է: Խորանից ներքեւ քառանկյան մեջ առնված վարդյակն է՝ երիզում դեպի դուրս թեքվող: Վարդյակի չորս անկյուններում արձանագրված է թվականը: Խաչքարի ստորին գոտում հեծյալի պատկերաքանդակն է, մի ձեռքում՝ խաչը, մյուսում՝ սանձը: Ձին հանդիսավոր շարժման մեջ է: Հեծյալի կողքին վեց տողանոց արձանագրություն է: Խաչասալը մինչեւ քիվն ունի արմավազարդերով կազմվող հարուստ եզրագոտի, որը գոտեւորում է նաեւ խորանի վերին հատվածը:

Հիշատակագիրը վարդյակի ստորին մասում գտնվող հեծյալի քանդակի աջ կողմում է, տարեթիվը՝ վարդյակի շուրջ. «Սուրբ խաչս յիշատակ եւ բարեխաւս առ Քրիստոս Սաթայվալէ [=Սաբլտավալեյի[58]] հազոյն, թվ[ին] ՌԽԸ [1599 թ.]»:

Այս խաչքարի մասին հիշատակում է նաեւ Ա. Այվազյանը՝ սխալմամբ ենթադրելով, որ այն Վրաստան է տեղափոխվել 1900-ական թթ. սկզբերին[59]:

Խաչքար 21. Խաչասալն ուղղանկյուն է: Խաչքարի հիմնային, հողի մեջ դրվող հատվածը կոտրված է: Դիմերեսի հորինվածքը կազմված է քանդակազարդ չորս գոտիներից՝ քիվ, խորան, վարդյակ, պատկերաքանդակ եւ արձանագրություն: Զարդաքանդակներն արված են բարձրաքանդակային խորությամբ: Խորանն ընկղմված է քարի հարթության մեջ: Խորանախաչն ունի ձգված համամասնություններ, ծավալը լրացված է հյուսածո ելնդազարդերով, խաչահատումին մոտ չորս թեւերի վրա առկա են քառանկյուն ակոսներ: Խորանի հիմքում ճարտարապետորեն ընդգծված ատիճանաձեւ պատվանդանն է, որի վրա գրեթե երկու-երրորդով խաչասալի մակերեւույթից դուրս է գալիս վարդյա-

56 Коллекции Кавказского музея, указ. соч., с. 205.
57 **Ս. Կարապետյան,** նշվ. աշխ., էջ 50:
58 Коллекции Кавказского музея, указ. соч., с. 205.
59 **Ա. Այվազյան,** նշվ. աշխ., էջ 168:

կը, վերջինիս վրա՝ անմիջապես խաչահիմքի տակ հստակ նշմարվում է Ադամի գլուխը ցուցող մարդկային դեմք: Խաչահիմքի երկու կողմերում մեկական ձեռքեր են՝ խաչեր բռնած: Փոքր խաչերից վերեւ եւ ներքեւ ընկած հարթությունները իրարից առանձնացած են հորիզոնական գծով: Վերին հարթությունը ամբողջովին պատված է ճոխ զարդաքանդակներով: Աստիճանաձեւ պատվանդանի երկու կողմերում երկտող արձանագրություն է: Խաչն առնված է բազմաստիճան սլաքաձեւ խորանի տակ, որի աջ եւ ձախ կողմերում հրեշտականման ֆիգուրներ են՝ ձեռքերն աղոթքի դիրքով: Քիվը կազմված է սլաքաձեւ կամարներով եւ միմյանցից ոլորուն կիսասյուներով առանձնացող հինգ փոքրիկ խորաններից: Դրանցում առկա են հետեւյալ պատկերաքանդակները՝ Տիրամայրը Մանկան հետ, Մոգերի երկրպագությունը, Ավետումը եւ Ընծայումը տաճարին[60]: Վարդյակը քառանկյուն շրջանակով առանձնանում է հորինվածքից: Վարդյակի արտաքին եզրը թեքված է դեպի դուրս: Վարդյակից անմիջապես ներքեւ հեծյալի պատկերաքանդակն է՝ խաչը ձեռքին, ձիու ոտքերի մասը կոտրված է: Հեծյալի գլուխը դիպչում է վարդյակի եզրին: Հեծյալի եւ արձանագրային քառանկյան միջեւ առկա է շրջանաձեւ ելուստ: Արձանագրությունն արված է եռատող: Մինչեւ քիվը խաչասալը եզերված է ութաթեւ աստղերի հաջորդականությամբ կազմվող եզրագոտիով, որը տարածվում է նաեւ խորանի վերնամասում՝ մեկուսացնելով քիվը ողջ հորինվածքից:

Կամարաշարի ներքո գտնվող պատկերաքանդակներից վեր ու վար մեկական տող արձանագրությունն է. «Ատին, Մարիամ, Մարաց Յ^{հաս}ս Ք^{ռիստոս}ս»: Վարդյակի ջորս անկյուններում թվագրությունն է. «Թվ[ին] ՌԾԱ [1602 թ.]»: Հիշատակարանում զետեղված է. «Մէլ^հք Գա^սպ^ար, Ը^ադտ^{աա}ր, Ք^ասպ^ար, Տ^աճ^{ատ}ի: Ս^{ուրբ} խաչս բարեհաւս է ի Ք^{ռիստոս} հոգ^նն Միրզումին կ^ող^ակց^հն Գուլիխասին: Գրիգոր, վ^առպետ Սարգ^հս: Խ^աչս յ^հշ^ատ^ակ է Միրզումին եւ կ^ող^ակց^հն»[61]:

Գ. Ռադդեի կողմից որպես լրացում նշվում է նմանօրինակ կոթողի մասին, որը գտնվել է Կովկասյան թանգարանի բակում: Ս. Կարապետյանի «Կովկասյան թանգարանի հայկական հավաքածուն» գրքում, ի թիվս վերոնշյալ նմուշների, առկա է եւս մեկ Ջուղայի խաչքար Արմազիի թանգարանից, որն էլ հավանաբար հանդիսանում է Գ. Ռադդեի հիշատակած օրինակը:

Խաչքար 22. Խաչասալն ուղղանկյուն է: Ունի ջուղայական խաչքարերում հազվադեպ հանդիպող առաջեկ ճակտոն: Ստորին՝ արձանագրությունից ներքեւ ընկած հատվածը հողմահարված է:

Վարդյակի տակ հողմնահարված արձանագրությունից ընթերցվում են սկզբի երկու տողերը. «Ս^{ուրբ} նշանս տէրունական....»[62]:

60 Коллекции Кавказского музея, указ. соч., с. 205.
61 **Ս. Կարապետյան,** նշվ. աշխ., էջ 42:
62 Նույն տեղում, էջ 51:

Խաչքար 23. Խաչքարը 1967 թ. Պետական Էրմիտաժին նվեր է տրվել Հայկական ՍՍՀ-ի կողմից: Խաչասալն ուղղանկյուն է: Քիվը հարդարված է բուսաերկրաչափական հորինվածքով: Կենտրոնում խաչն է՝ ասպիճանաձեւ պատվանդանի վրա, սլաքաձեւ կամարի տակ: Ներքեւում սկուտեղանման վարդյակն է: Վարդյակի չորս անկյուններում թվագրությունն է. «Թվ[ին] ՌԽԸ [1599 թ.]»: Վարդյակի ներքեւում հեծյալի պատկերաքանդակն է, աջ ձեռքին՝ խաչ: Կողքին հիշատակագիրն է. «Խաչս յիշատակ Մխիթարին հազն»: Ուշագրավ մի փաստ՝ կապված խաչքարի հետ. խաչքարի մասին հակիրճ հրապարակում թողած Ա. Կակովկինը[63], որպես դրա ստեղծման վայր, մատնանշում է Ջրվեժը՝ ակնարկելով, որ այն շատ նման է Ջուղայում ստեղծված խաչքարերին[64]: Էրմիտաժի Արեւելքի բաժնի գիտաշխատող Աննա Յերմոլաեւայի հետ ունեցած նամակագրական կապի արդյունքում պարզվեց, որ այս խաչքարը տարիներ շարունակ ներկայացվում է որպես Ջրվեժից ծագող:

Այս խաչքարի մասին հիշատակում կա Ա. Այվազյանի գրքում[65]:

Խաչքար 24. Գտնվում է Ժնեւի հայկական Ս. Հակոբ եկեղեցու բակում: Տեղադրվել է 1975 թ.: Կանգնեցված է մետաղական ակցաններ հիշեցնող պատվանդանի վրա: Նվիրված է Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին: Խաչքարն ունի հարթաքանդակային, սալի մակերեսից քիչ դուրս եկող հարդարանք: Ուշագրավ է վարդյակի եւ արձանագրային հատվածի միջեւ տեղ գտած աղոթող հոգեւորականի պատկերաքանդակը՝ հար եւ նման Թավրիզի երկու խաչքարերի պատկերաքանդակներին: Ներքեւում արձանագրությունն է. «Սուրբ խաչս բարէխաւս առ Քրիստոս մ...սի [մահդասի՞]...»: Խաչաթեւերի վերին երկու կողմերում թվագրությունն է. « Թվ[ին] ՌԺԲ [1563 թ.]»:

Խաչքարը տեղ է գտել «Աշխարհի հայկական հուշարձանները» գրքում, որտեղ նրա ծագումը սխալմամբ ներկայացվում է Նոր Ջուղայից, (Իրան)[66]:

Խաչքար 25. Գտնվում է Հայաստանի պատմության թանգարանում: Քիվը կազմված է հինգ խաչային հորինվածքներից: Խորանը բաժանված է երկու գոտիների, յուրաքանչյուրում երեքական խաչային հորինվածքներ՝ առնված սլաքաձեւ կամարների տակ: Ներքեւում սկուտեղանման վարդյակն է, վարդյակակիր քառանկյան չորս անկյուններում՝ թվագրությունը. «Թվ[ին] ՌԽԸ [1599 թ.]»: Ներքեւում վարդյակակիր քառանկյան մեջ է մխրճվել հեծյալի պատկերաքանդակը՝ կողքին եռատող արձանագրությունն. «Սուրբ խաչս յիշատակ է Մահդասի Ղալամին, թվ[ին] ՌԽԸ [1599 թ.]:

Հրատարակվել է մի քանի աշխատություններում[67]: 2007 թ. խաչքարն, ի

63 Էրմիտաժի Արեւելքի բաժնի ավագ գիտաշխատող:

64 Хачкар XVI века // СГЭ, Вып. 36, 1973, с. 73-74.

65 **Ա. Այվազյան,** նշվ. աշխ., էջ 166:

66 Աշխարհի հայկական հուշարձանները, հտ. 1, Եվրոպա, Եր., 2011, էջ 89:

67 **С. Тер-Аветисян,** նշվ. աշխ., էջ 168, Հատկանշական ցուցակ թանգարանային ժողովածուների, պր 1., Եր. 1964, էջ 55, **Ա. Այվազյան,** նշվ. աշխ., էջ 166:

Խաչքար 14,
Էջմիածին

Խաչքար 15,
Թավրիզ

Խաչքար 16,
Թավրիզ

Խաչքար 23,
Էրմիպաժ

Խաչքար 24,
Ժնև

Խաչքար 25,
ՀՊԹ

Հավելված 2

թիվս հայկական այլ բարձրարժեք հուշարձանների, ցուցադրվել է Լուվրում՝ «Սրբազան Հայաստան» ցուցահանդեսում[68]:

Եզրահանգում

Սրբավայրից, գերեզմանատնից, կամ առհասարակ մշակութայնացված տարածքից հուշարձանի տեղափոխումը խախտում է ընդհանուր մշակութային լանդշաֆտի միկրոկառուցվածքը եւ որակվում որպես բացասական միջամտություն: Սակայն Ջուղայի խաչքարերի օրինակն ստիպում է այս մասին ընդունված չափանիշների հանդեպ փոխել մեր վերաբերմունքը: Այն, ինչ կատարվեց Ջուղայի գերեզմանատան հազարավոր հուշարձանների հանդեպ, մեծագույն կորուստ է թե՛ մեր, թե՛ համաշխարհային մշակութային ժառանգության համար: Այդուհանդերձ, այժմ կանգնած ենք կատարված իրողության առջեւ, որի պարագային գերեզմանատնից խաչքարերի տեղափոխումը այլ երանգ ու արժեք է ձեռք բերում: Երբեմնի «գողացված», գաղտնի տեղահանված խաչքարերը այսօր դարձել են Ջուղայի փառահեղ խաչքարային դպրոցի միակ վկաները, իսկ այդ մշակութային լանդշաֆտի ամբողջությունը խաթարողները՝ այն պահպանող հերոսներ:

Ինչպես ցույց տվեց առանձին խաչքարերի քննությունը, դրանցից յուրաքանչյուրի տեղափոխումը եւ ինչ-որ վայրում հայտնվելն ունի իր դրդապատճառներն ու պատմությունը: Սրանց բոլորին միավորում են այն վտանգավոր, ռիսկային պայմանները, որոնք ուղեկցել են խաչքարերի տեղափոխմանը:

Խաչքարերից յուրաքանչյուրը, տեղադրվելով այս կամ այն վայրում, նպաստել է տարածքի մշակութայնացմանը: Այստեղ գործ ունենք նոր իրողության՝ խաչքարերի վերաշահագործման հետ, որը նոր խնդիրներ է առաջադրում խաչքարերի կանգնեցման նորորյա գործառույթի ուսումնասիրման հարցում:

Ջուղայի խաչքարերի ճակատագիրն էլ կարծես կրկնում է հայ ժողովրդի ճակատագիրը: Դարերի հողմերին դիմակայած, Պարսից հզորության ստվերն իրենց վրա զգացած խաչքարերն անգոր գտնվեցին թուրք բարբարոսի վայրագության առջեւ: Մի կերպ փրկված խաչքարերն էլ, ինչպես կոտորածից մազապուրծ եղածները, մինչ օրս ստիպված են դեգերելու, պայքարելու՝ այս երկրի վրա իրենց տեղը գտնելու համար: Ինչպես ցույց տվեց պահպանված խաչքարերի քննությունը, դրանց զգալի մասն այսօր կանգնած է կործանման, քայքայման վտանգի առջեւ:

Հաշվի առնելով նման վտանգները՝ մեր հետազոտությունը չի սահմանափակվել լոկ այդ հուշարձանների պատմա-մշակութային, իմաստաբանական եւ հորինվածքային քննությամբ, այլեւ որոշակի գործնական քայլեր են արվել դրանց պահպանման պայմանների բարելավման ուղղությամբ: Հայաստանի տարածքում գտնվող առավել վտանգված օրինակները՝ գինիների մառանի

68 Լուվրի թանգարան, Փարիզ (Ֆրանսիա), մարտ - հունիս 2007 թ.:

եւ Մասիսի խաչքարերը փեղափոխվել են Էջմիածին՝ Հայ Առաքելական եկեղեցու պահպանության փակ: Նախատեսվում է դրանք փեղադրել փակ ծածկի տակ, ինչպես նաեւ միջոցներ ձեռնարկել այդտեղ գտնվող մյուս խաչքարերի պահպանությունն առավել արդյունավետ կազմակերպելու համար: Վրաստանում գտնվող խաչքարերի խնդիրը մեր կողմից անմիջապես ներկայացվել է ՀՀ Մշակույթի նախարարություն: Այս ուղղությամբ որոշակի բանակցային գործընթացներ արվել են: Մնում է հուսալ, որ երկու կողմերը հետեւողական կլինեն խաչքարերի պահպանությունը եւ արժանի ներկայացումն ապահովելու համար: Էրմիտաժի խաչքարը, որը թվում է, պետք որեւէ խնդիր չունենար, փաստորեն, այնտեղ տեղափոխվելուց մինչ օրս պահվում եւ ներկայացվում է որպես Ջրվեժից ծագող: Այս ուղղությամբ եւս փորձել ենք միջամտել՝ համապատասխան տեղեկատվություն տրամադրելով: Հուսանք, որ այս անճշտությունը եւս մոտակա ժամանակներում կշտկվի, եւ խաչքարը կներկայացվի ճիշտ տեղագրությամբ: Ինչ վերաբերում է վտանգված հաջորդ խաչքարերի զույգին՝ Թոխմախի օրինակներին, ապա դրանց տեղափոխության հարցը այսօր մնում է ամենախնդրահարույցը, քանի որ գործ ունենք հիշատակի պահպանության հետ: Խաչքարերի տակ թաղված հանգուցյալի հարազատները խաչքարերի տեղափոխման կամ կրկնօրինակներով փոխարինելու ցանկացած առաջարկ մերժում են եւ, միգուցե, դրա իրավունքն ունեն, քանի որ նրանք եւս վտանգել են իրենց, դրանք Հայաստան բերելու համար: Այս պարագային անհրաժեշտ քայլեր է պետք ձեռնարկել խաչքարերը տեղում ամրակայելու եւ դրանց պահպանությունը պատշաճ կազմակերպելու համար: Խարբերդի խաչքարի տեղափոխումն անիմաստ ենք համարում, քանի որ այն չափազանց վնասված է եւ դյուրաբեկ: Ուստի տեղափոխման գործընթացն արդեն իսկ կարող է խաչքարի հորինվածքի վերջնական ոչնչացման պատճառ դառնալ: Այս հուշարձանի պահպանության համար եւս լավագույն լուծումը տեղում ամրակայումն է:

Մնում է հուսալ, որ հուշարձանների պահպանության խնդրով զբաղվող մարմինները համապատասխան զգոնություն եւ պատասխանատվություն կցուցաբերեն Ջուղայի փառահեղ խաչքարային դպրոցի վերջին նշխարները պահպանելու եւ սերունդներին փոխանցելու իրենց առաքելության մեջ:

РЕЗЮМЕ

Хачкары Джуги являются своеобразным проявлением культуры резки хачкаров. Своими неординарными объемно-пространственными и сюжетными решениями, высоким мастерством технической обработки, беспрецедентным количеством они представляют классический образец культурного взлета этого вида искусства. Однако уничтожение хачкаров Джуги азербайджанскими властями в 1998-2006 годах создает новые проблемы в изучении Джугинской школы хачкаров и для политики сохранения культурных памятников. Каким образом изучать потерянное наследие и как восполнить соответствующий пробел в хачкароведении?

С этой точки зрения особенно важно изучение сохранившихся единичных хачкаров Джуги. В данном случае актуально также озвучивание и предложение решения проблем, связанных с обеспечением их физической сохранности.

Цель данного исследования – детальное и всестороннее рассмотрение сохранившихся образцов джугинских хачкаров. Она предполагает решение следующих конкретных задач: а) представить историю вывоза джугинских хачкаров и их нынешнюю топографию, б) исследовать сохранившиеся образцы с позиций архитектуры, орнаментографии и эпиграфики, в) выяснить их институциональную принадлежность, физическое состояние, разработать дальнейшие мероприятия по их сохранению.

Данное исследование является первой попыткой систематизации сохранившихся хачкаров и всестороннего их представления. Впервые представлены также неопубликованные описания и фотографии нескольких частично неизвестных хачкаров.

Основными методами исследования являются: рассмотрение рукописных сведений, полевые изучения, свидетельства отдельных людей.

Изучение сохранившихся хачкаров позволяет создать представление о культурном своеобразии хачкаров Джуги, а также подчеркнуть важность и детализировать задачи, связанные с сохранением и обеспечением безопасности этих памятников материальной культуры.

SUMMARY

Cross stones of Jugha are one of the unique manifestations of the Armenian cross stone culture. However, 1998-2006 as the Azerbaijan powers eradicated the cemetery of Jugha, policy of researching the cross stone school and preserving cultural monuments faced new challenges. How to research the lost inheritance and how to fill the relevant gap in the science of cross stones?

From this perspective investigation of preserved unique cross stones of Jugha gains special significance. In that respect raising issues of ensuring their physical safety and suggesting solutions become relevant.

The aim of this report is to review/inspect the preserved cross stones of Jugha elaborately and comprehensively. The mentioned purpose implies solving the following issues: a) to present the history of how the cross stones of Jugha were relocated, and their current topography, b) to subject the preserved copies to architectural, lithographic and iconographic research, c) to find out their institutional belonging, physical condition and the measurements on future maintenance.

The present research is the first attempt to present all preserved cross stones of Jugha in a comprehensive way. The report will unprecedentedly include descriptions and photos of a few cross stones, which have not been published and are partially unknown.

Main methods of the research are reviewing bibliographic data/information, field inspection and personal testimonies.

Study of preserved cross stones allows us to envision peculiarities of cross stone culture of Jugha. It also elaborates and gives importance to issues related with protection and safety of those monuments.